

Աւշարերեալ խելաթափ.
 Վազէր զմէր հառաջմամբ
 Աչք յարտասուաց ցամաքեալ,
 Երտատուզոր աղէկէզ,
 Երբեմն կացեալ երթ յոտին,
 Երբեմն անկեալ յափսիթերս,
 Եւ զալարէր օձանման.
 Փութայր համնել յան ձկալին,
 Հազիւ հաս նա ուր ուրեմն,
 Առ տենչալին յոր անձկայր,
 Ետես ամբոխ շորջ պատեալ,
 Քաղաքապետն և քիշէ.
 Կացեալ անդէն ի զնին,
 Եղջերուի պէս աղբեր ջրոյ,
 Ցոյժ փափափէր տեսանել,
 Քաջըրիկ որդոյն զմարմին.
 Թէպէտ նեխեալ որդնալից.
 Լնուլ զտենչ իւր սրտին,
 Տալով մարմնոյն ջերմ համրոյր,
 Ոչ ետուն թոյլ հպիւ յայն,
 Կարօտակէզ գարձ ի տուն,
 Լուացեալ անդէն զմարմին,
 Տարեալ եղին ի շիրմի.
 Մնաց անբոյժ վէքը ի սիրտ
 Մօր խղճալոյն հէզ այրւոյն,
 Ո՞ր սիրտ արդեօք քարեղէն,
 Լուեալ զաղէտս ոչ հեղցէ
 Ցողս արտասուաց յիւր աչաց,
 Զապեալ զիկրս բարկութեան,
 Ցոճրագործաց չառնուլ վրէժ,
 Ո՞ր սիրտ արի ժուժեսցէ:

Գիշեալ մարմար մանիսն:

Այր ոմն Ստեփան անուն գնեալ ամաւ յառաջ զաղիւս ի պէտս շնութեան արտաքս քաղաքին ընդ մէջ արևելից և հիւսիսյ է տեղին աղիւսագործութեանն, գնայ ի 23 ն ներկայ ամսոյս թիրիլ զայնս առնու զշոտ մանկանն նեխոյ և որոնեալ գտնէ զզի նորին ի ներքոյ շնուռածոյն՝ ուր հուրն վառի ի թրծել զաղիւսն, առանց ձեռնամուխ լինելոյ իսկոյն երթայ առ քաղաքապետ և ծանուցանէ նմա զնմանէ, որոյ առեալ ընդ իւր զբժշկ քաղաքիս զան ի զնին.

և գտանեն զնա իր խեղդեալ խոնճանաւն, զխոնճանն տարեալ եղին ի սուզն ի քննել զզիարդ պատահմանն տակաւին կայ անյայտ և անլախման գործն, Բայց կարծիք հասարակութեան է անորոշ՝ ի Հրէից իցէ սպանեալ մանուկն՝ եթէ ի Տաճկաց. իսկ հասակ մանկանն զեռ նոր հասեալ ցաւարտութեարդ ամին՝ հաստատէ ըզկարծիս մեծագոյն մասին հասարակութեան թէ ի Հրէից իցէ մահ մանկանն, զի անկանի կորուստ նորին յիրլաքասանիրորդ օր ամսոյս, որ է քեփուռ Հրէից և տօն քաւութեան և ծոմ մեծ. Թողումք զՃմարիտն դատողութիւն բանիմաց մասինն ազգայնոց, Խնդրելով միանգամացն զնշանակութիւն քեփուռ Հրէական բառին:

Յառակից աղջային սհ, Տ. Օ.

1871 ամ 27 Ն Աւագուստին

Ի Գ. Ա. Հ. :

(Գողցես իրը աւանդութիւն կարծիք բազումք են զայսպիսի գործոյ Հրէից, այլ արդարութեան իրաւունք ներեն ոչ երբէք արկանել զյանցանսն ի պարանոցս Հրէից մանաւանդ ի դէպ գալով Վեփուռի որ է տօնի քաւութեան նոցա յաւուր մահուան ողորմելի մանկան: Ուստի մնալ պարտիմք ցցիւտ ոճրագործին ջանիւք Կահանդ. դատարանին Գանձակայ, զոր անշուշտ հաղորդէ սոյն այս նամակազիրս ի զիտութիւն աղջայնոց:)

(Հետեւեալը Երևանայ գեր. փոխ. — թեմակալին ուշադրութեան յանձնել պարտք կհամարիմք մեզ):

Խնդրագործնեան Աշտարակ Ա. Հանդիպոյ:

Տգիտութեան պտուղն ինքն ըստ ինքեան զառն է, իսկ նորս հետևանքն զառնազոյն, բայց կինի արգեօք այնպիսի միջոց, որ պանծալի զիտութեան ձաշակն, յարգն տարածուած տեսնենք բոլոր Հայ սերունդի մէջ, արզարև տեսնում ենք ներկայ գարուն մէջ զիտութեան պտղոյ ներբուստ ու արտա-

քուստ ծիծաղախիտ գոյնն, որ քարշումէ զեսփի իրան ինչպէս մազնիստն երկաթին, միմիայն նրանցը՝ որոնք փափր ի շատէ զգումն ու ճանաչումն նորա յարդն ու ճաշակն

Այս անշամանգաղ լրւոյ ճառագայթն՝ կծաղի արգե՞օք և նոր Բայազիկու դաւառի զիւղօրէից բնակչաց մէջ, որոնք լոկ կըսեն թէ վթուղթն ու մուրն, գործիք են զրագրութեան, բայց ինքեանք զուրկ միանգամայն, ու բոլորովիմք անհոգ իւրեանց մատաղահաս զաւակների կրթութեան համար, փոխանակ զի երբ մատղաշ հասակին մէջ հարկաւոր է անպատճառ ճանաչացնել երեխային զիտութեան ճաշակն, որպէս զի՞ ինքն զինքն ճանաչելոց յետոյ, ճանաչի և ազգութիւնն, ընդ հակառակն զիս տարիքն չհնագ տարուան՝ պարապացնումէն ողորմելուն տնական գործերուն մէջ, նստուցանելով երկու եղանց լծան վերայ երկիր հերքելու, ու Էսպէս շրջանը պտտուելով մընումն ձնչուած խաւար տգիտութեան քողի ներքեր, ամէն մի քայլ փոխելով այս ժողովրդոց մէջ՝ մարդ տիգահար է լինում, երբ տեսնումէ ճանաւանդ ամբողջ զիւղի մէջն, որ բաղկանումէ աւելի մի հարիւր յիսուն բնակիչ տանց, չկայ մէկ անձն, որ իւր անունն զէթ ստորագրել կարողանայ, Հայ եմ կասէ ազգաւ, : Բայց՝ ինչէ հայութիւնն պատմող չկայ, ամէն մի Հայ երիտասարդին սիրան է խոցուովում այս յետնեալ հոգեվարդի կիսամահ ժողովրդին նայելով ամենիս յայտնի է, որ յանցաւորներն իւրեանց անկշոելի մեղքերիցն ազատվում են Անոստովանութիւնով, : Քահանայից առջելը, մահագուշակ տկարները առողջութիւնն են ստանում ։ Պեղորայքով, Հմուտքիշկների ձեռքովը, իսկ այսպիսի խաժամուժ ժողովուրդն ընչով պիտի արթնանայ մառախլապատ կորստեան թմրութիւնիցը . . . ո՛չ ապաքէն և սոքա ազգութեան մի անդամն են, , եթէ վշտանայ մի անդամն, վշտանան և ամենայն անդամք ընդ նմա, , ու Էսպէս ուժը ու զօրութիւնը բոլոր անդամոց օրէ ցօր նուազելուց յետոյ, պատճառ է լինում ենթարկելոյ մարդին մահահրաւէր տկարութեան ներքե, այնուհետեւ և ո՛չ մի բժշկական գեղօրայք՝ չ'են ունենալ իւրեանց բնական ներգործութիւնը յետին թոշակից յետ գարձնե-

լու, ամէն մի ուսումնական անձն պարտաւոր է ազգասիրական հոգւով ցաւել այս ուժաթափի ժողովրդին վրայ, և որոնի հնար ոտի կանգնելու, Այսուամենայնիւ ազգը յշոր գնելով իւր արթուն ազգապետի վրայ, անտարակցոյ է, որ չի թողու սրանցը և սրանցից սերեալ զաւակները, մնալնոյն դրութեան մէջ, ինչպէս այժմն տեսնումնէք:

Վասնորոյ Հայաստանն թող այսուհետեւ հըրձուի որ երկար տարիներից յետոյ, ստացաւ իւրեանը այնպիսի մի պետ, որ իւր ուսումնակը հոգւյ եռանդեամբը խրախուսումէ մեղ ճանաչել զիտութեան արժէքը և ազգի յարգը ու փառքը:

Հայ աճ Աշու Աշտարակէցի

Ի 62 Հունիսի 1871 թ.

Էնք Բայազիէտ.

ԵՐԵՒԱՆԵՑ ՀՈԳԵՏՈՐ ԴՊՐՈՑԻՄԻ ԱՐԴԻՒՆՔ

Խոհագիտութեան Աշտարակ Ահագիրոյ

Այս անցեալ Ապրիլի 21ն կարդացիկ ԱՄեղու Հայաստանի, պատուական լրագրի մէջ, համար 12. Մարտի 27. տպեալ՝ մի յօդուած, մեր Երևանու հոգևոր Դպրոցին Աղեքսանդրապոլից հասանելի գումարի մասին Պ. Բագարատ Մելիք Սարգսեանցի գրած, Պարզն ասեմ շատ զարմացայ տեսնելով՝ որ մի այսպիսի անցայտ աղբիւր է գտնվում մեր Հ. Դպրոցին, բայց՝ կարծիքս փարատելու համար, սրբազն գործ համարեցի անշուշտ գնալ ուր հարկն էր, և անձամբ անձինտեղեկանալ: Որև իսկապէս գնացի քանի մի միջոցի յետ տեղւոյս Թեմ. Բարձր սրբազն Մկրտիչ Արքեպիսկոպոսի մօտ՝ ուր զանազան բաներ խօսելուց յետոյ, խօսեցիկ և Դպրոցի ներկայ անձամանձելի գրութեան վերայ՝ ի շարս որոյ և առաջարկեցի Ս. Կորը կարդալ Ալեքսանդր Յոդուած՝ կարդալէն զինի պատասխանեց նորին բարձր Սրբազնութիւնը, որ ԱՄիթէ չ'զիտէք դուք որ մեր Դպրոցը այսպիսի գումար չէ ստանում, ուուր էր, երանի՝ մի այդպիսի աղբիւր լինէր որ մեծ նպաստ կարող էր լինել մեր Դպրոցին, , սուրանից ևս քանի մի միջոց անցնելէն զինի, զիմցի-